ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/65

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից 22.05.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/65 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Երևաննախագիծ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 22.05.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն 03.05.2018թ. մասնակցել է Ծաղկաձորի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/8» ծածկագրով մրցույթին, տեղեկացնելով, որ Ընկերությունը 03.05.2018թ. դրությամբ չունի հարկային պարտավորություններ, սակայն հարկային

մարմին կատարած հարցմանը ի պատասխան տրվել է տեղեկատվություն, ըստ որի «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն 03.05.2018թ. դրությամբ ունի հարկային պարտավորություն 1 158 657 (մեկ միլիոն հարյուր հիսունութ հազար վեց հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամի չափով, ինչն անընդունելի էր Ընկերության կողմից:

Հարկային մարմինների հետ տարաձայնության պարզաբանման ժամանակ պարզ դարձավ, որ պարտքն առաջացել է 12.04.2018թ. շահութահարկի հաշվետվության հանձնման արդյունքում, այն է՝

1. «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն 12.04.2018թ. հանձնել է 2017թ. հաշվետու տարվա շահութահարկի հաշվետվություն, որի 37-րդ տողում նշված չի եղել հաշվետու տարվա համար կատարված շահութահարկի գծով կանխավճարների հանրագումարը: Այդ պատճառով նույն հաշվետվության 40-րդ տողում արտացոլված 1 151 777 ՀՀ դրամ պարտավորությունից չի հանվել 3 197 426 (երեք միլիոն հարյուր իննսունյոթ հազար չորս հարյուր քսանվեց) ՀՀ դրամ ժամանակին և ճիշտ չափով կատարած կանխավճարը և ինքնաշխատ ծրագիրը ցույց է տվել պարտավորություն, հակառակ պարագայում կլիներ գերավճար (3 197 426-1 151 777=+2 045 649), ինչը և կար հաշվապահական տվյալներով:

2. «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն 12.05.2018թ. հանձնել է 2017թ. հաշվետու ժամանակաշրջանի համար շահութահարկի ճշգրտող հաշվետվություն, որում արդեն համապատասխան 37-րդ տողում նշված է շահութահարկի գծով կատարած կանխավճարների հանրագումարը և այդ պարագայում ծրագիրը կարդում է կանխավճարի տողը և ցույց է տալիս գերավճար:

Հարկային մարմինը չի առարկում, որ կանխավճարներ կատարվել են ժամանակին և ճիշտ չափով, սակայն հարցին ի պատասխան հարկային մարմինը տվել է հետևյալ դիրքորոշումը, որ 2018 թվականից հարկային պարտավորությունները հաշվարկվում են ավտոմատ համակարգի կողմից և ինչ տվյալ ցույց է տալիս ծրագիրը հարկային մարմինը դա էլ տալիս է որպես հարցման պատասխան:

Ստացվում է այնպես, որ 12.04.2018թ. ներկայացված շահութահարկի հաշվարկի միայն 37-րդ տողը լրացրած չլինելու պատճառով (վրիպակ) Ընկերությանը առաջադրվել է պարտավորություն, ինչն ըստ էության չկա, ավելին՝ Ընկերությունն ունի գերավճար 2 և ավելի միլիոն դրամի չափով:

Ընկերությունը նշել է, որ իրենց դիրքորոշումը պաշտպանված է նաև ՀՀ հարկային օրենսգրքով, այն է՝ համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի՝ կատարած կանխավճարները ենթակա են նվազեցման շահութահարկի գումարից: Անկախ այն հանգամանքից կանխավճարի տողը լրացված է, թե ոչ, քանի որ Օրենքը գերակա է շահութահարկի լրացման կարգը հաստատող հրահանգից:

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի՝ եթե հարկային հարաբերությունները կարգավորող՝ հավասար իրավական ուժ ունեցող իրավական ակտերի դրույթները պարունակում են հակասություններ, երկիմաստություններ կամ տարընթերցումներ, ապա դրանք մեկնաբանվում և կիրառվում են հարկ վճարողի օգտին:

Սովորաբար նախորդ տարիների փորձը ցույց է տվել, որ անկախ այն հանգամանքից թե կանխավճարների տողը լրացված է եղել թե ոչ, կատարված կանխավճարները քարտավարները հաշվի են առել և նման խնդիրներ չեն եղել, այժմ ինքնաշխատ ծրագիր է գործում և կանխավճարի տողը նշված չլինելու պարագայում հաշվի չի առնվում, ինչը հակասում է ՀՀ հարկային օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին: Կատարված կանխավճարները՝ համաձայն օրենքի, պետք է հաշվանցվեին 15.04.2018թ. դրությամբ (շահութահարկի հաշվետվության ներկայացման վերջնաժամկետ) և 03.05.2018թ. դրությամբ Ընկերությունը նման խնդրի առաջ չէր կանգնի:

Ընկերությունը նշել է, որ ակնկալում է, որ բողոքի քննման արդյունքում կվերականգնվի օրենքով սահմանված «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի իրավունքը, և Ընկերությունը կունենա հնարավորություն մասնակցելու մրցույթին, քանի որ ըստ էության Ընկերությունը հարկային պարտավորություններ 03.05.2018թ. դրությամբ չունի:

Ի լրումն բողոքի Ընկերությունը 01.06.2018թ. գրությամբ հստակեցրել է բողոքով ներկայացված պահանջը և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել՝ դադարեցնել «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/8» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համապատասխան որոշումը:

«Երևաննախագիծ» ՓԲԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 13.06.2018թ. թիվ 40/01-84 գրությամբ հայտնել է, որ ներկայացված բողոքի էությունը կայացել է նրանում, որ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն հաշվապահական տվյալների հիման վրա Պատվիրատուին ներկայացրել է տեղեկատվություն, ըստ որի 03.05.2018թ.

դրությամբ չունի հարկային պարտավորություններ, սակայն Պատվիրատուի կողմից հարկային մարմին կատարած հարցմանն ի պատասխան տրվել է տեղեկատվություն ըստ որի «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն 03.05.2018թ. դրությամբ ունի հարկային պարտավորություն 1 158 657 (մեկ միլիոն հարյուր հիսունութ հազար վեց հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամի չափով, ինչն անընդունելի է Ընկերության կողմից:

«Երևաննախագիծ» ՓԲԸ-ն դիմում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարկային պարտավորությունների մնացորդների տարբերության վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով: 12.06.2018թ. Ընկերությունը ստացել է գրավոր պարզաբանում, որում նշված է, որ 03.05.2018թ. ինքնաշխատ ծրագիրը ցույց է տալիս պարտավորություն այն պատճառով, որ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն շահութահարկի հաշվարկում չի լրացրել կատարված կանխավճարների տողը (կանխավճարները կատարվել են ժամանակին և ճիշտ չափով):

Ստացվում է այնպես, որ 03.05.2018թ. հարկային մարմնի կողմից ներկայացված տեղեկանքը թե Ընկերությունն ունի հարկային պարտավորություն, դա վրիպակի (կատարված վճարումը չնշելու) պատճառ է: Ուստի կարելի է փաստ համարել այն, որ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն 03.05.2018թ. դրությամբ ըստ էության չունի որևէ հարկային պարտավորություն, քանի որ կատարված վճարումը առավել ծանրակշիռ է քան վճարումը հաշվետվության մեջ չլրացնելը:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է դադարեցնել «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին՝ «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/8» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համապատասխան որոշումը:

«Երևաննախագիծ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.05.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև հայտնել է, որ մինչև շահութահարկի գծով հաշվետվություն ներկայացնելը, Ընկերությունը սահմանված ժամկետներում կատարել է կանխավճարներ, որոնց վերաբերյալ սակայն առանձին տողով չի նշել շահութահարկի հաշվետվության մեջ: Արդյունքում վճարված կանխավճարները չեն հաշվանցվել, որի հետևանքով համակարգը

Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ցույց է տվել ժամկետանց հարկային պարտավորության առկայություն:

2. Ծաղկաձորի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Ծաղկաձորի համայնքապետարանը 23.05.2018թ. թիվ 197 գրությամբ ներկայացրել է «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Ծաղկաձորի համայնքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.05.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/65 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/65 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ծաղկաձորի համայնքապետարանի կողմից Ծաղկաձոր համայնքի կարիքների համար համայնքի գլխավոր հատակագծի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն 03.05.2018թ. հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.05.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 15.05.2018թ. տրամադրված

եզրակացության համաձայն՝ ***«Երևաննախագիծ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1 158 657 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.05.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով կայացված որոշմամբ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից 22.05.2018թ. բողոքը և 13.06.2018թ. գրությունը, Ծաղկաձորի համայնքապետարանի 23.05.2018թ. թիվ 197 գրությամբ ներկայացված «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից

հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի

գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Ծաղկաձորի համայնքապետարանի կողմից Ծաղկաձոր համայնքի կարիքների համար համայնքի գլխավոր հատակագծի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***«Երևաննախագիծ» ՓԲԸ-ն 03.05.2018թ. հայտ է ներկայացրել:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.05.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 07.05.2018թ. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե Ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 15.05.2018թ. տրամադրվել է եզրակացության համաձայն որի՝ ***«Երևաննախագիծ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1 158 657 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.05.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով կայացրած որոշմամբ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի հայտը մերժել է այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի Օրենքով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ:

«Երևաննախագիծ» ՓԲԸ-ն 13.06.2016թ. գրությամբ ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 06.06.2018թ. թիվ 11-1/31351-18 գրությունն ուղղված Ընկերությանը: Նշված գրության համաձայն՝ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն 12.04.2018թ. ներկայացրել է 2017թ. շահութահարկի հաշվարկ, սակայն հաշվարկի 37-րդ տողում չի գրվել հաշվետու տարվա համար շահութահարկի գծով կատարված կանխավճարների հանրագումարը, որի արդյունքում Ընկերության անձնական հաշվի քարտում ծրագիրը չի կատարել շահութահարկի կանխավճարների վերահաշվարկ, որի հետևանքով վերջինս 03.05.2018թ. դրությամբ ունեցել է հարկային պարտավորություն: Ընկերության կողմից 12.05.2018թ. ներկայացվել է 2017թ. Շահութահարկի ճշտված հաշվարկ, որի արդյունքում ՀՀ հարկային օրենսգրքի 326-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթների հիման վրա, կատարվել է ինքնաշխատ ծրագրային վերահաշվարկ ճշտված ***հաշվարկի ներկայացման ամսաթվով:*** Հետևաբար՝ ստացվում է, որ Ընկերությունն իր կողմից ներկայացված հաշվարկի արդյունքում է 03.05.2018թ. դրությամբ ունեցել հարկային պարտավորություններ, ինչը միայն 12.05.2018թ. ներկայացված ճշտված հաշվարկի հիման վրա վերահաշվարկվել է:

Դրա հետ մեկտեղ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն բողոքին կից ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 3 բաժնի կողմից 17.05.2018թ. տրված թիվ 544 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը ***12.05.2018թ.*** դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Այսպես՝ Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.15-րդ ենթակետով սահմանվել է, որ եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում սույն հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող,

ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Երևաննախագիծ» ՓԲԸ-ն «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/8» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Միևնույն ժամանակ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1 158 657 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 3 բաժնի կողմից 17.05.2018թ. տրված թիվ 544 տեղեկանքին, ապա վերջինիս համաձայն Ընկերությունը չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ 12.05.2018թ. դրությամբ, մինչդեռ Ընկերության կողմից Ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացվել է 03.05.2018թ., որի դրությամբ, համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 15.05.2018թ. եզրակացության, Ընկերությունը ունի Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: Տվյալ դեպքում համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 15.05.2018թ. եզրակացության՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն, իսկ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 06.06.2018թ. թիվ 11-1/31351-18 գրության

համաձայն՝ ծրագրային վերահաշվարկը իրականացվել է ճշտված հաշվարկի ներկայացման ամսաթվով (12.05.2018թ.):

Կարգի 44-րդ կետը սահմանում է, եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Տվյալ դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով Կարգի 44-րդ կետի պահանջներով, 16.05.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով կայացրած որոշմամբ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի հայտը մերժել է:

Այսպիսով՝ գտնում եմ, որ մերժելով «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի հայտը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ և առաջնորդվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի պահանջներով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի 22.05.2018թ. բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից 22.05.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**